13.10.25 - 17.10.25
11:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետ, Լոռու և Տավուշի մարզեր

Ս.թ. հոկտեմբերի 13-17-ը նախատեսվում է «ՀՀ հատուկ պահպանվող տարածքների մակրոսկոպիկ սնկերը» վերնագրով ամառային դպրոց, որը հայ ուսանողներին հնարավորություն կտա ձեռք բերելու նոր գիտելիքներ դաշտային և լաբորատոր փորձի միջոցով: Համաձայն Երևանի պետական համալսարանի և Վիեննայի համալսարանի միջև կնքված պայմանագրի՝ «APPEAR Academic Project 373» ծրագրի շրջանակում կատարվելու է Հայաստանի անտառածածկ շրջանների միկորիզային և քսիլոտրոֆ սնկերի բազմազանության գնահատում և ԴՆԹ բարկոդավորում:

Ամառային դպրոցն իրականացվում է ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի բուսաբանության և սնկաբանության և Վիեննայի համալսարանի բուսաբանության և կենսաբազմազանության հետազոտությունների ամբիոնների կողմից:

Ամառային դպրոցի ժամանակացույցը.

- **Հոկտեմբերի 13-ին՝ ժամը 11:00-17:00-ն**
- **Հոկտեմբերի 14-ին՝ ժամը 11:00-14:00-ն**
- **Հոկտեմբերի 15-ին՝ ժամը 09:00-19:00-ն**
- **Հոկտեմբերի 16-ին՝ ժամը 09:00-17:00-ն**
- **Հոկտեմբերի 17-ին՝ ժամը 09:00-19:00-ն**

Ամառային դպրոցի մասին.

- լրացուցիչ տեղեկությունները՝ **այստեղ**,

- ժամանակացույցի մանրամասները՝ **այստեղ**:

Գրանցում

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am